ԿՐԹՈՒԹՅՈՒՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԵՎ ՆՈՐԱՐԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆ

ԵՐԱԺՇՏՈՒԹՅՈՒՆ 2

ՆՅՈՒԹԵՐ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՀԱՄԱՐ

Առարկայի փորձագետ՝ ՏԱԹԵՎԻԿ ԱԲՐԱՀԱՄՅԱՆ

2021

2021-2022 ուս. տարի 1-ին կիսամյակ
(շաբաթական 1 դասաժամ, ընդամենը 17 դասաժամ)

Ուսուցիչ՝ _____

Դաս	Բաժիններ և թեմաներ	Գործունեության տեսակը	Վերջնարդյունքները
		Ի ԿԻՍԱՄՅԱԿ	
	Թեմա. Երաժշտության պարզ ու մատչելի ժանրերը (8 ժամ)		
1.	Երաժշտության երեք տեսակները (երգ , պար, քայլերգ) Ռ.Ալթունյան «Դպրոցի ճամփան» երգի ուսուցում կամ «Դպրոցի զանգը» Ռ.Խրիմյան	Ունկնդրում Ուսուցում Երգեցողություն Երաժշտառիթմական շարժում Իմպրովիզացիա	Ճանաչի երաժշտության պարզ տեսակները Երգի /մենակ կամ խմբով/ հուզական, ճիշտ կեցվածքով, շնչառությամբ, հստակ առոգանությամբ: Ստեղծի իմպրովիզացիաներ՝ շարունակի և ավարտի փոքրիկ մեղեդին:
2.	Երգ «Ջան գառնուկ» ուսուցում Կոմիտաս «Կաքավիկ» ունկնդրում «Կոմիտաս»	Ունկնդրում Ուսուցում Երգեցողություն Երաժշտառիթմական շարժում	Ներկայացնի երաժշտության ամենապարզ տեսակներից երգը: Ներկայացնի երգի կառուցվածքը: Պատմի Կոմիտասի մասին ձեռք բերած գիտելիքը Երգի /մենակ կամ խմբով/ հուզական ,ճիշտ կեցվածքով, շնչառությամբ, հստակ առոգանությամբ:

3.	Երգի տեսակները «Գացեք տեսեք» երգի ունկնդրում, ուսուցում «Տատիկի օրորը «ուսուցում հեղինակ՝ Ռ.Պետրոսյան	Ունկնդրում Ուսուցում Երգեցողություն Երաժշտառիթմական շարժում	Ներկայացնի երգի տեսակները՝օրորոցային, կատակ երգ: Երգի /մենակ կամ խմբով/ հուզական, ճիշտ կեցվածքով, շնչառությամբ, հստակ առոգանությամբ: Մեղեդու տրամադրությունը, բնույթը արտահայտի հույզերով, երգելով, պարելով կամ երգի մեղեդուն համապատասխան ռիթմական շարժումներով:
4.	Քայլերգ «Ուղիղ կարգով» երգի ուսուցում Ա. Խաչատրյան «Զանգեզուրյան քայլերգ» ունկնդրում Արամ Խաչատրյան	Ունկնդրում Ուսուցում Երգեցողություն Երաժշտառիթմական շարժում	Ներկայացնի երաժշտության ամենապարզ տեսակներից «Քայլերգը» Երգի (մենակ կամ խմբով) ներկայացնիհուզական, ճիշտ կեցվածքով, շնչառությամբ, հստակ առոգանությամբ: Ունկնդրվող ստեղծագործության տրա մադրությունը, բնույթը արտահայտի հույզերով, երգելով, պարելով կամ ռիթմական շարժումներով: Ստեղծի երաժշտական նյութին համապատասխան ռիթմական նվագակցություն «բնական» նվագարաններով՝ ձեռքերով, ոտքերով: Պատմի Ա.խաչատրյանի մասին ձեռք բերած գիտելիքը

5.	Քայլերգի տեսակները «Քայլերգի երեք տեսակները « Դ.Կաբալևսկի ունկնդրում «Մանկական քայլերգ» ուսուցում, հեղինակ՝ Ա.Մովսիսյան	Ունկնդրում Ուսուցում Երգեցողություն Երաժշտառիթմական շարժում	Ներկայացնի քայլերգի տեսակները: Երգի /մենակ կամ խմբով/ հուզական , ճիշտ կեցվածքով, շնչառությամբ, հստակ առոգանությամբ: Ունկնդրվող ստեղծագործության տրամադրությունը, բնույթը արտահայտի հույզերով, երգելով, պարելով կամ ռիթմական շարժումներով: Ստեղծի երաժշտական նյութին համապատասխան ռիթմական նվագակցություն «բնական» նվագարաններով՝ ձեռքերով, ոտքերով:
6.	Պար «Նախշուն կաքավ, կաքավիկ» պարերգի ուսուցում «Շուշիկի պարը» «Ծերունիների պարը» ունկնդրում	Ունկնդրում, Ուսուցում Երեցողություն երաժշտառիթմական շարժում	Ներկայացնի երաժշտության պարզ տեսակներից պարը: Ունկնդրվող ստեղծագործության տրամադրությունը, բնույթը արտահայտի հույզերով, երգելով, պարելով կամ ռիթմական շարժումներով: Ստեղծի երաժշտական նյութին համապատասխան պարային իմպրովիզացիա: Երգի խմբով, ներկայացնի ճիշտ կեցվածքով, շնչառությամբ, հստակ առոգանությամբ՝ զուգահեռ կատարելով խմբապարին հատուկ պարային շարժումներ:

7.	Պարի տեսակները «Հոպա զարկե ու քելե» պարերգի ուսուցում Ալ.Սպենդիարյանն»Տղամարդկանց պարը» Ա.Խաչատրյան «Աղջիկների պարը» Կոմիտաս «Շուշիկի պարը» ունկնդրում	Ունկնդրում Ուսուցում Երգեցողություն Երաժշտառիթմական շարժում	Ներկայացնի պարի տեսակները՝ պարերգ, խմբապար, մենապար: Մեղեդու տրամադրությունը, բնույթը արտահայտի հույզերով, երգելով, պարելով կամ ռիթմական շարժումներով: Երգի խմբով, ներկայացնի ճիշտ կեցվածքով, շնչառությամբ, հստակ առոգանությամբ ՝ զուգահեռ կատարելով խմբապարին հատուկ պարային շարժումներ:
8.	Բեմականցնել պարերը Էդ. Միրզոյան «Տիկնիկների պարը» «Արջուկների պարը» «Կատվի պարը» Կրկնել անցած պարերգերը	Ունկնդրում Ուսուցում Երգեցողություն Երաժշտառիթմական շարժում Իմպրովիզացիա	Բնութագրի ստեղծագործությունը,սեփական զգացողություններն արտահայտի դիմախաղի, մնջախաղի և պարային շարժումների միջոցով: Կատարի կերպարին համապատասխան նմանողական շարժումներ: Մեկնաբանի և տա գնահատական դասընկերների ներկայացրած պարային համարներին:
9.	դեպի ավելի բարդ ժանրեր՝ օպերա, բալետ սիմֆոնիա: Օպերա Ս.Մուրադյանի «Շունն ու կատուն» ուսուցում Ունկնդրում «Ալմաստ» օպերայից Ալեքսանդր Սպենդիարյան	Ունկնդրում Ուսուցում Երգեցողություն	Երգի /մենակ կամ խմբով/ հուզական, ճիշտ կեցվածքով, շնչառությամբ, հստակ առոգանությամբ: Ճանաչի երաժշտության բարդ ժանրերը, ներկայացնի ի՞նչ է օպերան: Պատմի Ալեքսանդր Սպենդիարյանի մասին ձեռք բերած գիտելիքը: Իմանա ում անունն է կրում Երևանի օպերայի և բալետի թատրոնի շենքը, ու՞մ արձաններն են կառուցված թատրոնի բակում:

10.	Օպերա (թեմայի խորացում) Ս.Մուրադյանի «Շունն ու կատուն» (խորացում): «Անուշ» օպերայից հատվածների դիտում:	Ունկնդրում Ուսուցում Երգեցողություն Տեսաերիզի դիտում:	Բացատրի ի՞նչ է օպերան, ովքեր են մասնակցում օպերային ներկայացմանը: Ծանոթ լինի ներկայացում,դերակատար, մեներգիչ,երգչախումբ,նվագախումբ բառերի իմաստին:
11.	Բալետ Ա.Խաչատրյանի «Գայանե» բալետից հատվածներ	Ունկնդրում Ուսուցում Տեսաերիզի դիտում: Իմպրովիզացիա	Բացատրի ի՞նչ է բալետը,ո՞վքեր են մասնակցում բալետային ներկայացմանը: Լսած պատմությունը ներկայացնի մնջախաղի, դիմախաղի միջոցով:
12.	Սիմֆոնիա, սիմֆոնիկ նվագախումբ: Մոցարտ, հատված 40-րդ սիմֆոնիայից ունկնդրում, դիտում Վոլֆգանգ Ամադեուս Մոցարտ Դիտել փոքրիկ հատված «Ամադեուս» ֆիլմից	Ունկնդրում Ուսուցում Տեսաերիզի դիտում	Բացատրի ի՞նչ է սիմֆոնիան, սիմֆոնիկ նվագախումբը: Քանի՞ մասից է բաղկացած դասական սիմֆոնիան,որքան է այդ ստեղծագործության մոնավոր տևողությունը, ինչ կանոններ պետք է պահպանել սիմֆոնիայի ունկնդրման ժամանակ: Ո՞վ է սիմֆոնիկ նվագախմբի ղեկավարը: Ներկայացնի Մոցարտի մասին ձեռք բերած գիտելիքը:

13.	Երգին,պար և քայլերգ կարող ենք հանդիպել սիմֆոնիայում, օպերայում և բալետում: Ա.Խաչատրյան «Սուսերով պար» «Գայանե» բալետից Ջ.Վերդի «Հաղթական քայլերգ» «Աիդա» օպերայի Պ.Չայկովսկի 4 սիմֆոնիա 4 մաս ունկնդրում «Փոքրիկ կարապիկների պարը» Չայկովսկու «Կարապի լիճը» օպերայից ունկնդրում «Во поле берёза стояла» ուսուցում Պ.Ի.Չայկովսկի	Ունկնդրում Ուսուցում Երգեցողություն Տեսաերիզի դիտում:	Ունկնդրի հատվածներ օպերայից բալետից և սիմֆոնիայից: Ըստ բնույթի տարբերի երգը,պարը, քայլերգը: Հասկանա,որ բարդ ժանրերում՝ օպերա, բալետ սիմֆոնիա,կարող ենք հանդիպել երգին,պարին և սիմֆոնիային: Երգի /մենակ կամ խմբով/ հուզական, ճիշտ կեցվածքով, շնչառությամբ, հստակ առոգանությամբ: Ներկայացնի ստացած տեղեկությունը Պ.Ի.Չայկովսկու մասին:
14.	«Պապն ու շաղգամը» երաժշտական հեքիաթի բեմականացում Մնջախաղ երաժշտության ներքո Երաժշտական խաղ	Ունկնդրում Ուսուցում իմպրովիզացիա	Ունկնդրվող նյութի միջոցով, կատարի համապատասխան նմանողական շարժումներ, ներկայացնի կերպար, իրավիճակ: Երգի /մենակ կամ խմբով/ հուզական ,ճիշտ կեցվածքով, շնչառությամբ, հստակ առոգանությամբ:

15.	«Պապն ու շաղգամը» կրկնություն «Ես եմ դիրիժորը» խաղ Բեթհովեն 9 սիմֆոնիա, ունկնդրում Լ.Վան Բեթհովեն	Ունկնդրում Ուսուցում	Երգի /մենակ կամ խմբով/ հուզական ,ճիշտ կեցվածքով, շնչառությամբ, հստակ առոգանությամբ: Ճանաչի դիրիժորի դերը նվագախմբում: Ունենա գախափար նվագախմբի մասին ըստ նվագարանների խմբերի՝ լարային,փողային հարվածային: Հնչող երաժշտությանը համապատասխան կատարի դիրիժորական շարժումներ: Ներկայացնի Լ.վան Բեթհովենի մասին ձեռք բերած գիտելիքը:
16.	«Ամանորն է մոտենում...» Ամանորյա երգերի ուսուցում Պ.Ի.Չայկովսկու «Շչելկունչիկ» բալետից հատվածների տեսաերիզի դիտում	Ունկնդրում Ուսուցում իմպրովիզացիա	Վերջնարդյունքներ Երգի /մենակ կամ խմբով/ հուզական ,ճիշտ կեցվածքով, շնչառությամբ, հստակ առոգանությամբ: Ստեղծի փոքրիկ իմպրովիզացիա Նոր տարի, նոր տարի գալդ թող լինի բարի, կամ ամանորյա բարեմաղթանքը ներկայացնի երաժշտական իմպրովիզացիայով;

17.	Կիսամյակի ամփոփում Ամփոփվում է կիսմյակի անցած նյութերը. տեսական մասը բանավոր հարցման միջոցով, գործնական՝ երգեր, պարեր ներկայացնում է իր ցանկությամբ՝ ընտրելով ուսուցանված ստեղշագորշությունների ցանկից: Գուշակիր մեղեդին խաղի եղանակով ունկնդրվում է առավել ճանաչելի ստեղծագործությունները:		Վերջնարդյունքներ Երգի /մենակ կամ խմբով/ հուզական, ճիշտ կեցվածքով, շնչառությամբ, հստակ առոգանությամբ: Ներկայացնի երաժշտության պարզ տեսակները, բարդ տեսակները, խոսի դրանց առանձնահատկությունների մասին, ճանաչի անցած կոմպոզիտորներին նկարներով, պատմի նրանց մասին ստացած տեղեկությունը: Երգի ուսուցանված երգերը: Պատասխանի հետևյալ հարցերին՝ · Երաժշտության դասերին ինձ շատ դուր եկավ/ ինձ դուր չեկավ: · Ինձ դուր եկավ և նշի կոնկրետ կոմպոզիտորին, ներկայացնի իր կարծիքը: · Ինչ լավ է,որ ես արդեն գիտեմ... ներկայացնի, թե ի՞նչն է կարևորում արդեն ստացած գիտելիքներից:

Դասի թեման՝ Երաժշտության երեք տեսակներ՝ երգ, պար, քայլերգ

Դասի նպատակները

- Ծանոթացում երաժշտության երեք պարզ տեսակների հետ
- Երաժշտական ստեղծագործությունների, դրանց տեսակների մասին պատկերացումների ձևավորում:

Վերջնարդյունքներ

- **Ս**տեղծի արտահայտիչ երգեցողություն դիմախաղի միջոցով
- Ճանաչի երաժշտության պարզ տեսակները
- Ստեղծի դպրոց թեմայի շուրջ փոքրիկ իմպրովիզացիա:
- Բացատրի, որ իր առօրյայում երաժշտությունը ի՞նչ դեր է խաղում,ուղեկցու՞մ է արդյոք իրեն կյանքում, պատկերացնու՞մ է նա իր կյանքն առանց երաժշտության:

Դասի ընթացքը՝

Դասի փուլերը	Ուսուցչի գործողություններ	Աշակերտների գործողություններ	Ժամանակը
Խթանում	Կազմակերպել մտագրոհ «Երաժշտությունը ձեր կյանքում» թեմայի շուրջ: Պարզել սովորողների նախնական գիտելիքը երգի, պարի, քայլերգի վերաբերյալ:	Ակտիվորեն մասնակցել մտագրոհին՝ անկաշկանդ ներկայացել թեմայի վերաբերյալ իրենց գիտելիքները:	5-10ր

Իմաստի ընկալում	Ուսումնասիրել դասագրքի 3, 4, 5 և 7 էջերը: Դասագրքի 7–րդ էջի «Երաժշտական ծառ»-ի արմատների օրինակով ներկայացնել երաժշտության երեք տեսակները՝ երգ պար քայլերգ, վարել փոքրիկ զրույց – դասախոսություն թեմայի շուրջ: Ուսուցանել «Դպրոցի Ճամփան» երգը: Առաջարկել ստեղծել փոքրիկ իմպրովիզացիա՝ «Հնչեց զանգը և ահա...» փոքրիկ ֆրազը շարունակեն և ավարտեն երգելով:	Ունկնդրել, վերլուծել, քննարկել երգի բառերը և կատարել երգը: Ստեղծել փոքրիկ իմպրովիզացիա	
Կշռադատում	Ֆրոնտալ հարցման միջոցով ամրապնդել օրվա դասանյութը	Ակտիվորեն մասնակցել ֆրոնտալ հարցմանը: Երգել անհատական (ըստ ցանկության) «Դպրոցի ճամփա» երգը	5-10ր

Ընդհանարական գաղափարներ

1. **Կառուցվածք և գործառույթ:**

Ծանոթանալով երաժշտության երեք տեսակներին սովորողները տեսականորեն պատկերացնում եմ, որ իրենց որոշակիորեն ծանոթ ստեղծագործությունները՝ երգը, պարը ,քայլերգը երաժշտաարվեստի ամենապարզ տեսակներն են, որ երգը պարը քայլերգը ուղեկցում են իրենց ամենավաղ տարիքից: Որ երաժշտությունը իրենց կյանքում շատ մեծ տեղ է զբաղեցնում և առանց երաժշտության կյանքը կլիներ չափազանց անհետաքրքիր: Որ իրենց առջև բացվում է երաժշտաարվեստի կախարդական աշխարհի դռները, որպեսզի նրանք ստանան հետաքիքր բազում գիտելիքներ: Գիտակցի, որ այդ գիտելիքի ձեռքբերումը կարևոր է:

Դասի թեման՝ Երաժշտության երեք տեսակներ- ԵՐԳ

Դասի նպատակները

· Ծանոթացում երգին, որպես երաժշտության ամենապարզ տեսակ

· Ծանոթացում երգի կառուցվածքին, (քառյակ, կրկներգ, բանաստեղծություն-երաժշտություն, ովքե՞ր են ստեղծում երգը,)

· Ծանոթացում Կոմիտասի հետ, որպես հայ երգի Մեսրոպ Մաշտոց:

Վերջնարդյունքներ

· Ներկայացնի երաժշտության ամենապարզ տեսակներից երգը:

· Ներկայացնի ինչի՞ց է կազմված երգը:

· Պատմի Կոմիտասի մասին

· Երգի /մենակ կամ խմբով/ հուզական, ճիշտ կեցվածքով, շնչառությամբ, հստակ առոգանությամբ

Դասի ընթացքը՝

Դասի փուլերը	Ուսուցչի գործողություններ	Աշակերտների գործողություններ	Ժամանակը
Խթանում	Սովորողների նախնական գիտելիքը պարզելու նպատակով կազմակերպել մտագրոհ «Ի՞նչ գիտեք երգի մասին» թեմայի շուրջ :	Ակտիվորեն մասնակցել մտագրոհին՝ անկաշկանդ ներկայացել թեմայի վերաբերյալ իրենց գիտելիքները:	5-10ր

Իմաստի ընկալում	Ուսուցիչը երգում է «Ջան գառնուկ» երգը, ապա երգի օրինակով բացատրում, որ երգը երաժշտական ամենապարզ ստեղծագործությունն է: Այն կազմված է մեղեդուց և խոսքերից: Երգը ստեղծում են երգահանը և բանաստեղծը: Ծանոթացնել Կոմիտասի հետ: Ուսուցանել «Ջան Գառնուկ» երգը:	Ունկնդրել, վերլուծել, քննարկել երգի բառերը և կատարել երգը: Ընթերցել դասագրքային տեղեկությունը Կոմիտասի մասին:	25-30ր
Կշռադատում	Ֆրոնտալ հարցման միջոցով ամրապնդել օրվա դասանյութը: Ունկնդրել Կոմիտասի «Կաքավիկ» երգը, ներկայացնել երգի հեղինակներին՝ Հ.Թումանյան Կոմիտաս:	Ակտիվորեն մասնակցել ֆրոնտալ հարցմանը: Կրկնել անհատական կամ խմբով (ըստ ցանկության) «Ջան գառնուկ» երգը:	5-10ր
Տնային աշխատանք	.....	.....	

Ընդհանարական գաղափարներ
Անհատներ և հարաբերություններ
Ո՞վ եմ ես: Ո՞վ ենք մենք:
Ծանոթանալով երաժշտության երեք տեսակներից երգին, սովորողը հասկանում է , որ երգը բանաստեղծության և մեղեդու միաձուլումն է: Որ հեղինակները կարող են լինել ինչպես պրոֆեսիոնալ կոմպոզիտոր բանաստեղծներ այնպես էլ խոսքերի կամ երաժշտության հեղինակներ: Որ երգով արտահայտվում է մարդու տարատեսակ զգացմունքներ: Որ երգը իրենց ուղեկցում է ծնված օրվանից:

Դասի թեման՝ Երգի տեսակները

Դասի նպատակները

· Ծանոթացում երգի տեսակներին ՝օրորցային, կատակ երգ:

· Երգը մաքուր ինտոնացիայով, արտահայտիչ երգելու, մեղեդու բնույթը, տրամադրությունը հույզերով կամ ռիթմական շարժումներով ուղեկցելու կարողության զարգացում:

· Երգի տեսակները համեմատելու, տարբերակելու և բնութագրելու կարողության զարգացում:

Վերջնարդյունքներ

· Ներկայացնի երգի տեսակները՝ օրորոցային, կատակ երգ:

· Երգի /մենակ կամ խմբով/ հուզական, ճիշտ կեցվածքով, շնչառությամբ, հստակ առոգանությամբ:

· Մեղեդու տրամադրությունը, բնույթը արտահայտի հույզերով, երգելով, պարելով կամ ռիթմական շարժումներով:

· Ներկայացնի օրորների և կատակ երգի տարբերություններն ու նմանությունները:

Դասի ընթացքը՝

Դասի փուլերը	Ուսուցչի գործողություններ	Աշակերտների գործողություններ	Ժամանակը
Խթանում	Սովորողների նախնական գիտելիքը պարզելու նպատակով կազմակերպել մտագրոհ՝ «Այն ո՞ր երգն է, որ քուն է բերում» թեմայի շուրջ :	Ակտիվորեն մասնակցել մտագրոհին՝ անկաշկանդ ներկայացել թեմայի վերաբերյալ իրենց գիտելիքները:	5-10ր

Իմաստի ընկալում	Ուսուցիչը զրույցի միջոցով ներկայացնում է օրորոցային երգը: Խոսում այն մասին, որ առաջին անգամ մարդը երաժշտության հետ առնչվում է մայրիկի երգած օրորոցայինի միջոցով: Որից հետո ոսուցանվում է «Տատիկի օրորը» երգը: Ապա ներկայացնել երգի մեկ այլ տեսակ՝ կատակ երգ, «Գացեք տեսեք» ժողովրդական երգը:	Ունկնդրել, վերլուծել, քննարկել երգի բառերը և կատարել երգերը:	25-30ր
Կշռադատում	Ֆրոնտալ հարցման միջոցով ամրապնդել օրվա դասանյութը:	Ակտիվորեն մասնակցել ֆրոնտալ հարցմանը: Բացատրել կատակ երգի և օրորների տարբերություններն ու նմանությունները: Կրկնել սովորած երգերը:	5-10ր
Տնային աշխատանք	.....	.....	

Ընդհանարական գաղափարներ

Օրինաչափություն

Ծանոթանալով երգի տեսակներին՝ օրորներ, կատակ երգ սովորողները իմանում են, որ առաջին երգը, որ մարդն առհասարակ լսել է իր կյանքում դա մայրիկի երգած օրորն է: Օրորների առանձնահատկությունը այն է, որ մեղեդին մեղմ է և քուն է բերում: Սակայն պարտադիր չէ օրորը երգի միայն մայրիկը: Օրոր երգում է նաև տատիկը, քույրիկը, կարող է երգել նաև հայրիկը: Ծանոթանում է նաև երգի կատակ տեսակին, որը կտրուկ տարբեր է օրորներից:Ներկայացնում է օրորի և կատակ երգի տարբերություններն ու նմանությունները:

Դասի թեման՝Քայլերգ

Դասի նպատակները

· Ծանոթացում երաժշտության տեսակներից քայլերգին

· Երգը մաքուր ինտոնացիայով, արտահայտիչ երգելու, մեղեդու բնույթը, տրամադրությունը հույզերով կամ ռիթմական շարժումներով ուղեկցելու կարողության զարգացում:

Վերջնարդյունքներ

· Ներկայացնի երաժշտության ամենապարզ տեսակներից «Քայլերգը»

· Երգի (մենակ կամ խմբով) ներկայացնի հուզական, ճիշտ կեցվածքով, շնչառությամբ, հստակ առոգանությամբ:

· Ունկնդրվող ստեղծագործության տրամադրությունը, բնույթը արտահայտի հույզերով, երգելով, պարելով կամ ռիթմական շարժումներով:

· Ստեղծի երաժշտական նյութին համապատասխան ռիթմական նվագակցություն «բնական» նվագարաններով՝ ձեռքերով, ոտքերով:

Դասի ընթացքը՝

Դասի փուլերը	Ուսուցչի գործողություններ	Աշակերտների գործողություններ	ժամանակը
Խթանում	Գրատախտակին գրել քայլերգ բառը և սովորողների օգնությամբ բացահայտել, որ քայլերգ բառը կազմված է քայլել և երգել բառերից:	Ակտիվորեն մասնակցել մտագրոհին՝ անկաշկանդ ներկայացել թեմայի վերաբերյալ իրենց գիտելիքները:	5-10ր

Իմաստի ընկալում	Հնչում է Ա.Խաչատրյանի «Զանգեզուրյան քայլերգը», ուսուցիչը առաջարկում է սովորողներին իրենց զգացածը արտահայտել մարմնի շարժումներով: Ուսուցիչը ցույց է տալիս քայլերգին հատուկ շարժումները, զուգահեռ տալիս քայլերգի տեսականորեն բացատրությունը: Ուսուցանվում է «Ուղիղ կարգով՛ երգը: Պատմել կոմպոզիտոր Ա.Խաչատրյանի մասին, ներկայացնել հատկապես կոմպոզիտորի մանկությունից:	Ունկնդրել, վերլուծել, քննարկել երգի բառերը: Ներկայացնել ի՞նչ է քայլերգը: «Ուղիղ կարգով» երգը կատարել քայլերգին համապատասխան շարժումներով: Ընթերցել դասագրքից Ա.Խաչատրյանի մասին տեղեկությունը:	25-30ր
Կշռադատում	Ֆրոնտալ հարցման միջոցով ամրապնդել օրվա դասանյութը:	Ակտիվորեն մասնակցել ֆրոնտալ հարցմանը օրվա դասանյութի շուրջ: Ներկայացնել Ա.Խաչատրյանի մասին տեղեկությունը: Կրկնել անհատական կամ խմբով (ըստ ցանկության) «Ուղիղ կարգով» երգը:	5-10ր

Ընդհանարական գաղափարներ

Անհատական և մշակութային արտահայտում

Ո՞րն է ստեղծարարության բնույթը և նպատակը:

Ծանոթանալով քայլերգի հետ սովորողները բացահայտում են, որ երաժշտությունը, որը իրենց մեջ առաջացնում է քայլելու ցանկություն կոչվում է քայլերգ: Դրա ապացույցն է դառնում ունկնդրվող քայլերգը ,երբ նկատում են, որ իրենց կամքից անկախ ուզում են կանգնել և կատարել քայլերգին համապատասխան շարժումներ: Քայլերգը սովորողները հիմնականում ասոցացնում են բանակի, զինվորի հետ,հարկ է նաև շեշտել հայրենասիրության գաղափարը, քայլերգի միջոցով նուրբ անցում կատարել նաև այդ տիրույթ:

Դասի թեման՝ Պար

Դասի նպատակները

· Ծանոթացում երաժշտության ամենապարզ տեսակներից՝ պարին:

· Երգը մաքուր ինտոնացիայով, արտահայտիչ երգելու, մեղեդու բնույթը, տրամադրությունը հույզերով և պարային շարժումներով ուղեկցելու կարողության զարգացում:

Վերջնարդյունքներ

· Ներկայացնի երաժշտության պարզ տեսակներից պարը:

· Ունկնդրվող ստեղծագործության տրամադրությունը, բնույթը արտահայտի հույզերով, երգելով, պարելով կամ ռիթմական շարժումներով:

· Ստեղծի երաժշտական նյութին համապատասխան պարային իմպրովիզացիա

· Երգի խմբով, ներկայացնի ճիշտ կեցվածքով, շնչառությամբ, հստակ առոգանությամբ ՝ զուգահեռ կատարելով խմբապարին հատուկ պարային շարժումներ:

Դասի ընթացքը՝

Դասի փուլերը	Ուսուցչի գործողություններ	Աշակերտների գործողություններ	Ժամանակը
Խթանում	Ի՞նչ դեր ունի պարը ձեր կյանքում, սիրու՞մ եք պարել, հարցերի շուրջ կազմակերպել մտագրոհ:	Ակտիվորեն մասնակցել մտագրոհին՝ անկաշկանդ ներկայացել թեմայի վերաբերյալ իրենց գիտելիքները:	5-10ր

Իմաստի ընկալում	Ուսուցիչը վարում է փոքրիկ զրույց պարի մասին: Զրույցը այն մասին է,որ պարը մեզ ուղեկից է մեր կյանքի ամենավաղ շրջանից, այնպես, ինչպես երգը: Որ պարով մարդն արտահայտում է իր հույզերը, գացմունքներն ու տրամադրությունը: Պարը լիցքաթափում է, առույգացնում է: Որից հետո հնչում է կոմիտասյան «Շուշիկի պարը»: Սակայն մինչ ունկնդրելը, ուսուցիչը տալիս է հանձնարարություն ունկնդրելուց հետո ներկայացնել Շուշիկին ամենայն մանրամասնությամբ, նրա հագուստը, հագուստի գույնը մազերը: (կարելի է հանձնարարել նաև նկարել Շուշիկին): Ապա ունկնդրել նաև «Տղամարդկանց պարը» Ուսուցանել «Նախշուն կաքավ, կաքավիկ» պարերգը, կատարել խմբերգին հատուկ պարային շարժումներ:	Դասարանի աղջիկները ներկայացնում են «Շուշիկի պարը» (ըստ ցանկության): Տղաները պարում են «Տղամարդկանց պարը՛ իմպրովիզացիոն եղանակով (ըստ ցանկության)	25-30ր
Կշռադատում	Ֆրոնտալ հարցման միջոցով ամրապնդել օրվա դասանյութը:	Ակտիվորեն մասնակցել ֆրոնտալ հարցմանը օրվա դասանյութի շուրջ: Կրկնել անհատական կամ խմբով (ըստ ցանկության) «Նախշուն կաքավ, Կաքավիկ» պարերգը:	5-10ր

Ընդհանարական գաղափարներ

Անհատներ և հարաբերություններ

Ո՞վ եմ ես: Ո՞վ ենք մենք:

Ծանոթանում են պարին, որպես երաժշտության ամենապարզ տեսակ: Բացահայտում են,որ պարը արտահայտում է ամենատարբեր զգացմունքներ և,որ պարը իրենց ուղեկցելու է ամբողջ կյանքի ընթացքում:

Դասի թեման՝ Պարի տեսակներ

Դասի նպատակները

· Ծանոթացում պարի տեսակներին ՝խմբապար, մենապար, պարերգ

· Երգը մաքուր ինտոնացիայով, արտահայտիչ երգելու, մեղեդու բնույթը, տրամադրությունը հույզերով կամ ռիթմական շարժումներով ուղեկցելու կարողության զարգացում:

· Պարի տեսակները համեմատելու, տարբերակելու և բնութագրելու կարողության զարգացում:

Վերջնարդյունքներ

·Ներկայացնի պարի տեսակները՝ պարերգ, խմբապար, մենապար:

· Մեղեդու տրամադրությունը, բնույթը արտահայտի հույզերով, երգելով, պարելով կամ ռիթմական շարժումներով:

· Երգի խմբով, ներկայացնի ճիշտ կեցվածքով, շնչառությամբ, հստակ առոգանությամբ՝ զուգահեռ կատարելով խմբապարին հատուկ պարային շարժումներ:

Դասի ընթացքը՝

Դասի փուլերը	Ուսուցչի գործողություններ	Աշակերտների գործողություններ	ժամանակը
Խթանում	Մտագրոհ պար թեմայի շուրջ: Վերհիշել «Նախշուն կաքավ, կաքավիկ» պարերգը:	Ակտիվորեն մասնակցել մտագրոհին՝ անկաշկանդ ներկայացել թեմայի վերաբերյալ իրենց գիտելիքները:	5-10ր

Իմաստի ընկալում	Գրել գրատախտակին մենապար, խմբապար և պապերգ բառերը: Քննարկել յուրաքանչյուր բառը բացելով՝ մենակ պարել, խմբով պարել, պարել երգել: Վերհիշել «Շուշիկի պարը» որպես մենապար ապա ունկնդրել Ալ.Սպենդիարյանի «Տղամարդկանց պարը» Ա.Խաչատրյան «Աղջիկների պարը» որպես խմբապար և ուսուցանել համապատասխան պարային շարժումներ: Որից հետո ուսուցանել «Հոպա զարկե ու քելե» պարերգը:	Ունկնդրել, վերլուծել, քննարկել երգի բառերը և կատարել պարերին ու պարերգին համապատասխան շարժումներ:	25-30ր
Կշռադատում	Ֆրոնտալ հարցման միջոցով ամրապնդել օրվա դասանյութը:	Ներկայացնել պարերի տեսակները և բացատրել դրանց տարբերությունները:	5-10ր

Ընդհանարական գաղափարներ
Անհատական և մշակութային արտահայտում
Ո՞րն է ստեղծարարության բնույթը և նպատակը:

Ծանոթանալով պարի տեսակներին՝ մենապար, խմբապար, պարերգ առնչակից է դառնում ժողովրդական մշակույթի ամենատարածված տեսակներին՝ դրանց միջոցով նախնյած պատմությանը և կենցաղին: Ձգտում է միասնականության, նույն գործողությունը հանուն նպատակի կատարելու ունակությունն է ձևավորվում: Այս կերպ նաև խմբային աշխատանք կատարելու հմտություն է ձևավորվում:

Դասի թեման՝ Բեմականացնել պարերը

Դասի նպատակները

· Զարգացնել սովորողների երևակայությունը, ստեղծագործական միտքը:

· Զարգացնել համպատրաստից ստեղծագործելու կարողությունը

Վերջնարդյունքներ

· Ինքնուրույն բեմադրի պարային համար՝ կատարելով ունկնդրվող մանրանվագին բովանդակությանը համապատասխան նմանողական շարժումներ:

· Երգի խմբով, ներկայացնի ճիշտ կեցվածքով, շնչառությամբ, հստակ առոգանությամբ ՝ զուգահեռ կատարելով խմբապարին հատուկ պարային շարժումներ:

Դասի ընթացքը՝

Դասի փուլերը	Ուսուցչի գործողություններ	Աշակերտների գործողություններ	Ժամանակը
Խթանում	Մտագրոհ՝ պարի տեսակները թեմայի շուրջ: Վերհիշել Սովորած պարերգերը:	Ակտիվորեն մասնակցել մտագրոհին՝ անկաշկանդ ներկայացել թեմայի վերաբերյալ իրենց գիտելիքները:	5-10ր

Իմաստի ընկալում	Ուսուցիչը փոքրիկ ներածական զրույցով հիշեցնում է, որ պարի միջոցով մարդը կարող է արտահայտել իր ամենատարբեր հույզերն ու զգացմունքները: Նարկայացնում է, որ կարող են հանդպել պարեր, որոնք երաժշտական պարային բեմականացումներ են հիշեցնում: Որից հետո սովորողները ունկնդրում են Մ.Մազմանյանի «Կատվի Արջի և Տիկնիկների» պարերը և առաջարկում ըստ ցանկության բեմականացնել պարերը:	Համպատրաստից ըստ ցանկության ընտրում են որևէ պար և բեմադրում: Դասարանը հանդիսատեսի դերում ընտրում է լավագույն պարային համարը բեմադրողին: Ծափահարություններով խրախուսվում է յուրաքանչյուր համար ներկայացնող աշակերտը: Գնահատում	25-30ր
Կշռադատում	Ֆրոնտալ հարցման միջոցով ամրապնդել «Պար» թեման:	Դասի ավարտին երգել և պարել սովորած պարերգերը:	5-10ր

Ընդհանարական գաղափարներ
Անհատական և մշակութային արտահայտում
Ո՞րն է ստեղծարարության բնույթը և նպատակը:

Համպատրաստից ստեղծում է կամ ստեղծածի շուրջ դատողություններ է անում, տալիս է գնահատական, կայացնում է որոշում:

Դասի թեման՝ Դեպի ավելի բարդ երաժշտական ժանրեր 8 ժ: Օպերա

Դասի նպատակները

· Ծանոթացում երաժշտության բարդ ժանրերի՝ օպերա,բալետ, սիմֆոնիա

· Ձևավորել պատկերացում օպերայի մասին, որպես երաժշտական մեծածավալ ստեղծագործություն:

Վերջնարդյունքներ

Երգի /մենակ կամ խմբով/ հուզական, ճիշտ կեցվածքով, շնչառությամբ, հստակ առոգանությամբ:

Ճանաչի երաժշտության բարդ ժանրերը, ներկայացնի ի՞նչ է օպերան:

Պատմի Ալեքսանդր Սպենդիարյանի մասին ձեռք բերած գիտելիքը: Իմանա ում անունն է կրում Երևանի օպերայի և բալետի թատրոնի շենքը, ու՞մ արձաններն են կառուցված թատրոնի բակում:

Դասի ընթացքը՝

Դասի փուլերը	Ուսուցչի գործողություններ	Աշակերտների գործողություններ	Ժամանակը
Խթանում	Մտագրոհ մեթոդի միջոցով վերհանվի գիտելիքը երաժշտության երեք պարզ տեսակների մասին: Ինչ է օպերան ձեր պատկերացմամ:	Ակտիվորեն մասնակցել մտագրոհին՝ անկաշկանդ ներկայացել թեմայի վերա–բերյալ իրենց գիտելիքները:	5-10ր

	Մտագրոհի միջոցով նախապատրաստել սովորողներին նոր դասի թեմայի ընկալմանը, ներկայացնել, որ պարզ տեսակները յուրացնելուց հետո ժամանակն է ճանաչել բարդ տեսակները՝ օպերա, բալետ, սիմֆոնիա: Երգի հետ զուգահեռներ անցկացնելով բացատրել ի՞նչ է օպերան, ովքեր են մասնակցում օպերային ներկայացմանը, ցույց տալ գրքից օպերայի և բալետի թատրոնի շենքը, տալ ինֆորմացիա նաև այն ամսին, թե ում անունն է կրում օպերայի և բալետի շենքը, ում արձաններն են կառուցված բակում, փոքրիկ պատմություն Սպենդիարյանի կենսագրությունից, որից հետո ուսուցանվի Ս.Մուրադյանի «Շունն ու կատուն» երգը:	«Շունն ու կատուն» երգի փոքրիկ օրինակով պատկերացում են կազմում օպերային ներկայացման մասին (դասին ունենալ բեմականացման համար անհրաժեշտ պարագաներ՝ մորթի, դիմակներ և ալն): Դասագրքում դիտում են Ալ.Սպեն-դիարյանի նկարը, Թումանյանի և Սպենդիարյանի արձանների նկարը, օպերայի և բալետի թատրոնի շենք նկարը:	25-30ր
Կշռադատում	Ֆրոնտալ հարցման միջոցով ամրապնդել «Օպերա» թեման:	Կատարում են փոքրիկ վերլուծություն, քննարկում թեմայի շուրջ:	5-10ր

Ընդհանարական գաղափարներ
Անհատական և մշակութային արտահայտում
Ո՞րն է ստեղծարարության բնույթը և նպատակը:

Լայնացնում է մտահորիզոնը, բացի երգ, պար քայլերգից ծանոթանում է ծավալուն ստեղծագործություններից՝ օպերայի հետ: Իմանում է պատմամշակութային կոթողների՝ մեծանուն արվեստի գործիչների արձանների, դրանց կառուցման նախապատմության հետ: Զարգացնում է բառապաշարը՝ երաժշտա-թատերական ներկայացում, դերակատար, մենակատար, նվագախումբ:

Դասի թեման ՝ Օպերա (թեմայի խորացում)
Ս.Մուրադյանի «Շունն ու կատուն»:
«Անուշ» օպերայից հատվածների դիտում:

Վերջնարդյունքներ
Բացատրի ի՞նչ է օպերան, ովքեր են մասնակցում օպերային ներկայացմանը:
Ծանոթ լինի ներկայացում,դերակատար, մեներգիչ, երգչախումբ,նվագախումբ բառերի իմաստին:

Դասի ընթացքը՝

Դասի փուլերը	Ուսուցչի գործողություններ	Աշակերտների գործողություններ	Ժամանակը
Խթանում	Մտագրոհ օպերա թեմայի շուրջ:	Ակտիվորեն մասնակցել մտագրոհին՝ անկաշկանդ ներկայացել թեմայի վերաբերյալ իրենց գիտելիքները:	5-10ր

	Տեսականորեն ստացած գիտելիքը խորացնելու նպատակով դասի ընթացքում դիտել «Անուշ» օպերայից հատվածներ: նախքան դիտելը մատչելի կերպով ներկայացնել պոեմը՝ հիշատակելով Հ. Թումանյանին: Բնութագրել գլխավոր հերոսներին, ապա բացատրել,որ օպերայում գլխավոր հերոսները մեներ գիչներն են,հաջորդաբար օրինակի վրա բացատրե,լ թե ի՞նչ դեր ունի երգչախումբը, պարային խումբը, հստակ բացատրել արվեստի տեսկների կապը այս ծավալուն ստեղծագործության մեջ: Որից հետո անցնել տեսաերիզը դիտելուն:	Դիտել տեսաերիզը և ուղղել հարցեր:	25-30ր
Կշռադատում	Ֆրոնտալ հարցման միջոցով ամրապնդել «Օպերա» թեման:	Քննարկում է, վերլուծում է օպերայից ստացած տպավորությունները: Կատրում է «Շունն ու կատուն» երգը:	5-10ր

Ընդհանարական գաղափարներ
Արդարություն և զարգացում
Ի՞նչ են հետընթացն ու զարգացումը:
Դիտելով հատվածներ օպերային ներկայացումից, ընդլայնում է երաժշտաարվեստի մասին ունեցած պատկերացումները: Հասկանում է, որ երգը դա իսկապես շատ պարզ ու մատչելի ստեղծագործություն է այնպիսի մեծածավալ ստեղծագործության հետ համեմատ,ինչպիսին է օպերան: Ձեռք է բերում դատողություններ անելու հմտություն տեսածի և ունկնդրածի շուրջ : Պոեմի բովանդակությունը զարգացնում է հուզականությունը, ապրումակցելու ունակությունը: Բացի դա նաև չարի և բարու, անարդարության, սխալի հանդեպ ընդվզելու ցանկություն է առաջ գալիս:

Դասի թեման՝ Բալետ
Ա.Խաչատրյանի «Գայանե» բալետից հատվածներ

Վերջնարդյունքներ
Բացատրի ի՞նչ է բալետը,ո՞վքեր են մասնակցում բալետային ներկայացմանը:
Լսած պատմությունը ներկայացնի մնջախաղի, դիմախաղի միջոցով:

Դասի ընթացքը՝

Դասի փուլերը	Ուսուցչի գործողություններ	Աշակերտների գործողություններ	ժամանակը
Խթանում	Մտագրոհ պար թեմայի շուրջ: Ի՞նչ է բալետը ձեր պատկերացմամ:	Ակտիվորեն մասնակցել մտագրոհին՝ անկաշկանդ ներկայացել թեմայի վերաբերյալ իրենց նախնաան պատկերացումները:	5-10ր
	Ուսուցիչը պատմում է փոքրիկ պատմություն, ապա հնչում է մեղեդի և առաջարկում, որպեսզի այդ պատմությունը սովորողները ներկայացնեն մնջախաղի, դիմախաղի միջոցով: Որից հետո տալիս է բալետի տեսական բացատրությունը: Ապա հիշատակելով կոմպոզիտոր Ա.Խաչատրյանին մատչելի կերպով ներկայացնում է «Գայանե» բալետի լիբրետոն և ցուցադրում հայտնի հատվածներ բալետից:	Պատմությունը ներկայացնել համապատասխան պարային շարժումներով: Դիտել տեսաերիզը և ուղղել հարցեր:	25-30ր

Կշռադատում	Ֆրոնտալ հարցման միջոցով ամրապնդել<< բալետ >> թեման:	Քննարկում է, վերլուծում է բալետից ստացած տպավորությունները:	5-10ր

Ընդհանարական գաղափարներ
Արդարություն և զարգացում
Ի՞նչ են հետընթացն ու զարգացումը:

Սովորողը մոտ շարունակվում է երաժշտաարվեստի մասին պատկերացումների զարգացումը, գիտելիքի ձեռքբերումը: Զուգահեռ զարգանում է նաև երևակայությունը և ստեղծագործելու ունակությունը: Պատմությունները ,որոնք գրական հիմք են հադիսանում երաժշտական մեծածավալ ստեղծագործությունների համար, իրենց հերթին սովորողներին տալիս են մտածելու, վերլուծելու, ապրումակցելու, չարը բարուց զտելու կարողություն:

Դասի թեման ՝ Սիմֆոնիա, սիմֆոնիկ նվագախումբ:
Մոցարտ, հատված 40-րդ սիմֆոնիայից ունկնդրում, դիտում
Վոլֆգանգ Ամադեուս Մոցարտ
Դիտել փոքրիկ հատված «Ամադեուս» ֆիլմից

Վերջնարդյունքներ
Բացատրի ի՞նչ է սիմֆոնիան, սիմֆոնիկ նվագախումբը:
Քանի՞ մասից է բաղկացած դասական սիմֆոնիան, որքա՞ն է այդ ստեղծագործության մոնավոր տևողությունը, ի՞նչ կանոններ պետք է պահպանել սիմֆոնիայի ունկնդրման ժամանակ: Ո՞վ է սիմֆոնիկ նվագախմբի ղեկավարը:
Ներկայացնի Մոցարտի մասին ձեռք բերած գիտելիքը:

Դասի ընթացքը՝

Դասի փուլերը	**Ուսուցչի գործողություններ**	**Աշակերտների գործողություններ**	**Ժամանակը**
Խթանում	Մտագրոհ եղանակով վերհանել օպերա, բալետ ստեղծագործությունների վերլուծության ընթացքում նվագախմբի մասին ստացած նախնական գիտելիքը:	Ակտիվորեն մասնակցել մտագրոհին՝ անկաշկանդ ներկայացել թեմայի վերաբերյալ իրենց նախնաան պատկերացումները:	5-10ր

	Մատչելի կերպով բացատրել ի՞նչ է նվագախումբը: Նվագարանները ներկայացնել ըստ խմբերի՝լարային, փողային,հարվածային: Ներկայացնել դիրիժորի դերը նվագախմբում: Ապա տալ սիմֆոնիայի տեսական բացատրությունը: Դիտել տեսաերիզ, հատված Մոցարտի 40-րդ սիմֆոնիայից: Պատմել նաև Վ.Ա.Մոցարտի կյանքից, մանկությունից: Դիտել «Ամադեուս» ֆիլմից ներկայացված պատմությանը համապատասխան հատված:	Դիտում է և ունկնդրում, կատարաւում է համապատասխան վերլուծություններ, դիտարկումներ:	25-30ր
Կշռադատում	Ֆրոնտալ հարցման միջոցով ամրապնդել «սիմֆոնիա, սիմֆոնիկ նվագախումբ» թեման:	Ներկայացնում է օրվա դասնյութից ստացած իր տպավորությունները, գիտելիքը:	5-10ր

Ընդհանարական գաղափարներ
Անհատական և մշակութային արտահայտում
Ո՞րն է ստեղծարարության բնույթը և նպատակը:
Սովորողը ունկնդրում է, դիտում է սիմֆոնիայից հատված: Նկատում է, որ մարդկանց մի մեծ խումբ միասին հնչեցնում է նույն ստեղծագործությունը, ամեն մեկը իր նվագարանի միջոցով: Դաստիարակվում է որպես համերգասրահի ապագա կիրթ ունկնդիր: Իմանում է, որ կան ինչպես քաղաքավարության կանոններ այնպես էլ՝ կանոններ,որոնք պարտադիր է պահպանել համերգասրահում այս կամ այն ստեղծագործությունները ունկնդրելիս.օրինակ՝ սիմֆոնիայի մասերի արանքում ծափահարել չի կարելի, որ դրանով շեղում ես նվագախմբին, դիրիժորին,ովքեր այդ պահին կատարում են ստեղծագործական աշխատանք:

Դասի թեման ՝ Երգ, պար և քայլերգ կարող ենք հանդիպել սիմֆոնիայում, օպերայում և բալետում:
Ա.Խաչատրյան «Սուսերով պար» «Գայանե» բալետից

Ջ.Վերդի «Հաղթական քայլերգ» «Աիդա» օպերայի
Պ.Չայկովսկի 4 սիմֆոնիա 4 մաս ունկնդրում
«Փոքրիկ կարապիկների պարը» Չայկովսկու «Կարապի լիճը» օպերայից ունկնդրում

«Во поле берёза стояла» ուսուցում
Պ.Ի.Չայկովսկի

Վերջնարդյունքներ
Ունկնդրի հատվածներ օպերայից բալետից և սիմֆոնիայից: Ըստ բնույթի տարբերի երգը,պարը, քայլերգը:
Հասկանա,որ բարդ ժանրերում՝օպերա, բալետ սիմֆոնիա, կարող ենք հանդիպել երգին,պարին և սիմֆոնիային:
Երգի /մենակ կամ խմբով/ հուզական, ճիշտ կեցվածքով, շնչառությամբ, հստակ առոգանությամբ:
Ներկայացնի ստացած տեղեկությունը Պ.Ի.Չայկովսկու մասին:

Դասի ընթացքը՝

Դասի փուլերը	Ուսուցչի գործողություններ	Աշակերտների գործողություններ	ժամանակը
Խթանում	Վերհիշել մեծածավալ ստեղծագործությունները՝ օպերա, բալետ, սիմֆոնիա:	Ակտիվորեն մասնակցել մտագրոհին՝ անկաշկանդ ներկայացել թեմայի վերաբերյալ իրենց նախնաան պատկերացումները:	5-10ր

	Ունկնդրել հատվածներ օպերայից,սիմֆոնիայից,բալետից և թողնել որպեսզի սովորողները իրենք տարբերակեն հնչող ստեղծագործությունների բնույթը: Որից հետո բացատրել, որ իրենց արդեն հայտնի օպերա,բալետ,սիմֆոնիայում կարող են հանդիպել երգ, պար, քայլերգ հիշեցնող մեղեդիներ: Ուսուցանվում է «Во поле берёза стояла» Որից հետո ունկնդրել Պ.Ի.Չայկովսկու IV սիմֆոնիայի IV մասը: Առաջարկել գտնել սիմֆոնիայի և երգի կապը: Պատմել Չակյովսկու մասին, բնութագրել նրան մանկության տարիներին:	Ունկնդրել, վերլուծել, քննարկել երգի բառերը և կատարել երգին համապատասխան պարային շարժումներ:	25-30ր
Կշռադատում	Ամփոփիչ հարցում կատարել թեմայի շուրջ:	Ներկայացնում է օրվա դասնյութից ստացած իր տպավորությունները, գիտելիքը:	5-10ր

Ընդհանարական գաղափարներ
Կայունություն և փոփոխություն

Սովորողները խորությամբ են սկսում ուսումնասիրել դասական մեծածավալ ստեղծագործությունները: Կատարում են բացահայտումներ, ըստ որի մեծ մաշտաբների մեջ կարելի է գտել փոքրը: Ինչպես ամեն գործի մեջ այստեղ ևս «մեծը» փոքրիկ մասնիկների միաձուլման արդյունք է:

Դասի թեման՝ «Պապն ու շաղգամը» երաժշտական հեքիաթի բեմականացում
Մնջախաղ երաժշտության ներքո խաղ

Վերջնարդյունքներ
Ունկնդրվող նյութի միջոցով, կատարի համապատասխան նմանողական շարժումներ, ներկայացնի կերպար, իրավիճակ: Երգի /մենակ կամ խմբով/ հուզական, ճիշտ կեցվածքով, շնչառությամբ, հստակ առոգանությամբ:

Դասի ընթացքը՝

Դասի փուլերը	Ուսուցչի գործողություններ	Աշակերտների գործողություններ	ժամանակը
Խթանում	Մտագրոհ անցածի շուրջ Հարցեր՝ ասացեք երաժշտական ներկայացումներ որտեղ դերակատարները, պարողներ են, դերակատարները երգիչներն են, երգչախումբը:	Ակտիվորեն մասնակցել մտագրոհին՝ անկաշկանդ ներկայացել թեմայի վերաբերյալ իրենց նախնաան պատկերացումները:	**5-10ր**

	Ուսուցիչը ներկայացնում է «Պապն ու շաղգամը» որպես հեքիաթ: Խոսում են հեքիաթի հերոսների մասին,վեր են լուծում հեքիաթի իմաստը: Որից հետո հիշեցնելով օպերայի մասին, որպես օպերայի նախատիպ ուսուցիչը երգում և ներկայացնում է «Պապն ու շաղգամը» երաժշտական հեքիաթը: Այնուհետև ուսուցանվում է երաժշտական հեքիաթը դասարանից ընտրելով դերակատարներ: Նորից հիշեցնելով մեներգիչ, երգչախումբ, դերակատար բառերը: մեծամասնության մասնակցությունը ապահովվել դերակատարները կազմը փոփոխելով:	Ունկնդրել, վերլուծել, քննարկել «Պապն ու շաղգամը» հեքիաթի իմաստը, կատարել համապատասխան պարային շարժումներ:	25-30ր
Կշռադատում	Ամփոփել դասը	Ներկայացնում է օրվա դասնյութից ստացած իր տպավորությունները, գիտելիքը:	5-10ր

Ընդհանարական գաղափարներ
Մասշտաբ, համամասնություն, քանակ:

Դասի ընթացքում բեմականացվում է երաժշտական հեքիաթ: Դա արվում է միասնական ուժերով՝ դասընկերներ, որոնցից մի քանիսը մենակատարներ են մյուս մասը հանդես է գալիս երգչախմբի դերում: Հեքիաթի բովանդակությունը միասնականության մասին է, որ խնդիրը հաղթահարվեց միասնական պայքարի հետևանքով:

Դասի թեման ՝
«Պապն ու շաղգամը» կրկնություն
«Ես եմ դիրիժորը» խաղ
Բեթհովեն 9 սիմֆոնիա, ունկնդրում: Լ.Վան Բեթհովեն

Վերջնարդյունքներ

- *Երգի /մենակ կամ խմբով/ հուզական, ճիշտ կեցվածքով, շնչառությամբ, հստակ առոգանությամբ:*
- *Ճանաչի դիրիժորի դերը նվագախմբում:*
- *Ունենա գախափար նվագախմբի մասին, ըստ նվագարանների խմբերի՝ լարային, փողային հարվածային:*
- *Հնչող երաժշտությանը համապատասխան կատարի դիրիժորական շարժումներ:*

Դասի ընթացքը՝

Դասի փուլերը	Ուսուցչի գործողություններ	Աշակերտների գործողություններ	ժամանակը
Խթանում	Մտագրոհ սիմֆոնիա, սիմֆոնիկ նվագախումբ թեմայի շուրջ:	Ակտիվորեն մասնակցել մտագրոհին՝ անկաշկանդ ներկայացել թեմայի վերաբերյալ իրենց նախնաան պատկերացումները:	5-10ր

	Ուսոցիչը ներկայացնում է դիրիժորի դերը նվագախմբում: Դիտում են հատված Լ. վան Բեթհովենի 9-րդ սիմֆոնիայից: Ուսուցիչը պատմում է Բեթհովենի կենսագրությունից, մանկությունից: Որից հետո դասարանը բաժանվում է լարային փողային հարվածային խմբերի ստեղծվում է նվագախմբի իմիտացիա և դասարանից տարբեր աշակերտներ հանդես են գալիս դիրիժորի դերում:	Ունկնդրել, վերլուծել, քննարկել կատարել մեղեդու բնույթին համապատասխան դիրիժորական շարժումներ:	25-30ր
Կշռադատում	Ամփոփել դասը դիրիժորական գործունեությանը վերաբերող հարցերով:	Ներկայացնում են «Պապն ու շաղգամը» երաժշտական հեքիաթը:	5-10ր

Ընդհանարական գաղափարներ
Անհատներ և հարաբերություններ

Սովորողը իմանում է,որ դիրիժորը ղեկավարն է, որ նրա ճիշտ ու հստակ ձեռքերի շարժումներից է կախված մի մեծ կոլեկտիվի «անխափան» աշխատանքը: Որ կոլեկտիվը նաև ընտանիք է, որտեղ, ճիշտ է, ղեկավարը տվյալ դեպքում՝դիրիժորը, մեծ դեր ունի, սակայն յուրաքանչյուր անդամ պետք է իր գործում չթերանա, որ ընդհանուր նպատակը, տվյալ դեպքում՝ կատարման որակը, լինի կատարյալ: Նույն կերպ իրենց դասարանն է, որքան ուսուցիչը իր աշխատանքը լավ կատարի միևնույնն է,որ աշակերտը չսովորի, ծուլանա, արդյունքի չի հասնի:

Դասի թեման՝ «Ամանորն է մոտենում...»
Ամանորյա երգերի ուսուցում
Պ.Ի.Չայկովսկու «Շչելկունչիկ» բալետից հատվածների տեսաերիզի դիտում

Վերջնարդյունքներ
Երգի /մենակ կամ խմբով/ հուզական, ճիշտ կեցվածքով, շնչառությամբ, հստակ առոգանությամբ:
Ստեղծի փոքրիկ իմպրովիզացիա Նոր տարի, նոր տարի գալդ թող լինի բարի, կամ ամանորյա բարեմաղթանքը ներկայացնի երաժշտական իմպրովիզացիայով:

Դասի ընթացքը՝

Դասի փուլերը	Ուսուցչի գործողություններ	Աշակերտների գործողություններ	ժամանակը
Խթանում	Փոքրիկ զրույց Ամանորի հրաշքին սպասելով:	Ակտիվորեն մասնակցել մտագրոհին՝ անկաշկանդ ներկայացել թեմայի վերաբերյալ իրենց նախնական պատկերացումները:	5-10ր
	Ուսոցիչը ուսուցանում է ամանորյա թեմայով երգ: Դասարանում ստեղծվում է նախատոնական ուրախ տրամադրություն: Առաջարկում է կատարել փոքրիկ իմպրովիզացիա: Դիտում են հատված «Շչելկունչիկ» բալետից, քննարկում են ամանորյա խորհրդանիշ ձմեռ պապիկից սպասելիք նվերը:	Ունկնդրել, վերլուծել, քննարկել կատարել իմպրովիզացիա:	25-30ր

Կշռադատում	Ամփոփել դասը՝ կատարելով դասին ուսուցանված ամանորյա երգը:	Ամանորյա տրամադրությունը արտահայտեն երգ-երաժշտությամբ:	5-10ր

Ընդհանարական գաղափարներ
Անհատական և մշակութային արտահայտում
Ո՞րն է ստեղծարարության բնույթը և նպատակը:

Ուսուցանված երգի միջոցով ստեղծվում է տոնական տրամադրություն: Տոնական ավանդույթները, տոնից սպասումները ամփոփվում է կատարած երգի մեջ:

Դասի թեման `

Կիսամյակի ամփոփում

Ամփոփվում է կիսմյակի անցած նյութերը. տեսական մասը բանավոր հարցման միջոցով, գործնական՝երգեր, պարեր ըստ ցանկության, ստեղծագործության ցանկից:

Գուշակիր մեղեդին խաղի եղանակով ունկնդրվում է առավել ճանաչելի ստեղծագործությունները:

Վերջնարդյունքներ

Երգի /մենակ կամ խմբով/ հուզական, ճիշտ կեցվածքով, շնչառությամբ, հստակ առոգանությամբ:

Ներկայացնի երաժշտության պարզ տեսակները, բարդ տեսակները, խոսի դրանց առանձնահատկությունների մասին, ճանաչի անցած կոմպոզիտորներին նկարներով, պատմի նրանց մասին ստացած տեղեկությունը: Երգի ուսուցանված երգերը:

Պատասխանի հետևյալ հարցերին՝

· Երաժշտության դասերին ինձ շատ դուր եկավ/ ինձ դուր չեկավ:

· Ինձ դուր եկավ և նշի կոնկրետ կոմպոզիտորին, ներկայացնի իր կարծիքը:

· Ինչ լավ է,որ ես արդեն գիտեմ... ներկայացնի, թե ի՞նչն է կարևորում արդեն ստացած գիտելիքներից:

Դասի ընթացքը՝

Դասի փուլերը	Ուսուցչի գործողություններ	Աշակերտների գործողություններ	ժամանակը
Խթանում	Խթանող հարցեր անցածի կրկնության շուրջ:	Ակտիվորեն մասնակցել մտագրոհին՝ անկաշկանդ ներկայացել թեմայի վերաբերյալ իրենց նախնաան պատկերացումները:	5-10ր
	Կատարվի բանավոր հարցում տեսությունից: Հնչեցվի հարցեր և տրվի յուրաքանչյուր	Ունկնդրել, վերլուծել, քննարկել, երգել:	25-30ր

	սովորողի հարցերին անհատական պատասխանելու հնարավորություն:		
Կշռադատում	Ունկնդրել սովորողներին հայտնի երաժշտական ստեղծագործություններից:	Ավարտել դասը ամանորյա երգի կատարմամբ:	5-10ր

Ընդհանարական գաղափարներ
Անհատներ և հարաբերություններ
Ո՞վ եմ ես: Ո՞վ ենք մենք:

Սովորողները վերհիշում են և ամփոփում իրենց մեկ կիսամյակի ընթացքում ստացած գիտելիքը: Կատարում են նաև վերլուծություն իրենց ձեռքբերումների շուրջ: Սովորողները բացատրում են, թե իրենց այս ընթացքում ստացած գիտելիքը որքա՞ն են կարևորում: